արտասահմանյան բանկերի հետ և շարունակում է ընդլայնումը միջազգային համագործակցության շրջանակներում:

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Բանկը շարունակում է գրանցել դրական աճ՝ մեծ չափով ավելացնելով ակտիվները, նոր պրոդուկտներ և գործիքակազմ:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 117 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճելով մոտ 71%-ով: Բանկի ակտիվներում հաճախորդներին տրված վարկերը են կազմում մոտ 76% տեսակարար կշիռ: Վարկային պորտֆելը կազմում է 89 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ աճելով 57%-ով:

Հաշվետու տարում ակտիվների աճին զուգահեռ 221%-ով աճել են նաև Բանկի պարտավորությունները՝ կազմելով 63 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ աճել են նաև թողարկված պարտատոմսերի ծավալը՝ կազմելով 6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 1.5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն: Ընկերության թողարկած պարտքային արժեթղթերի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը՝ 8.6 մլն ԱՄՆ դոլար և 2.4 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 34 մլրդ՝ ընդհանուր պարտավորությունների մոտ 54 %-ը, նախորդ ժամանակաշրջանի 3%-ի նկատմամբ:

Բանկի սեփական կապիտալը կազմել է 54 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով մոտ 11%-ով:

Եկամուտների և Ծախսերի հիմնական ցուցանիշներ

Բանկի տոկոսային եկամուտները 2023թ.-ին աճել են մինչև 14.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճելով 6%-ով: Զուտ տոկոսային եկամուտը վարկային կորուստների գծով ծախսերի նվազեցումից հետո կազմում է 12 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճելով 15%-ով: Տոկոսային ծախսերը կազմել են 2.5 մլրդ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճելով 2%-ով:

Հիմնական գործունեության նկարագրություն

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն («Բանկ») նախկին «Ֆասթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն է: ՀՀ Կենտրոնական բանկի 2022 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության լիցենզիա և այսուհետ կոչվում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ: Ունենալով ֆինանսական ոլորտում ավելի քան 30 տարվա փորձ՝ Բանկը ակտիվորեն իրականացնում է զարգացման միջոցառումներ՝ բանկային SS տեխնոլոգիաների, ֆինանսական, մարդկային ռեսուրսների, ինչպես նաև ռիսկերի կառավարման ուղղությամբ: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգին՝ ֆինանսական և գործառնական ռիսկերի կառավարմանը, համապատասխանության և ՓԼԱՖ դեմ պայքարի միջոցառումներին: Առանձնահատուկ ուշադրություն դարձվում է տեղեկատվական անվտանգության հարցին՝ արդյունքում ստանալով ISO27001 հավաստագիր: Բանկն իր գործունեությունն իրականացնում է սեփական ներստեղծված ծրագրային ապահովման միջոցով: Կարևորելով վերջինիս շարունակական զարգացումը՝ բանկում գործում է առանձնացված Թվային բանկինգի տնօրինութուն, որի ներքո գործում է տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների մեծ թիմ: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ընկերության աշխատակիցների քանակը աճ է գրանցել՝ 31.12.2023թ.-ի դրությամբ հասնելով 953-ի, որը 28 %-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկն իրականացնում է հետևողական աշխատանք հաճախորդներին ամբողջական բանկային ծառայությունների տրամադրման, այդ ծառայությունների թվայնացման և սպասարկման բարձր որակի ապահովման համար: Բանկի բիզնես մոդելի կենտրոնում հաճախորդն է, ով ստանում է անհատականացված և արդյունավետ լուծումներով բանկային ծառայություններ Հայաստանի բոլոր մարզերում ներկայացված 32 մասնաճյուղերով, կոնտակտային կենտրոնով և մոբայլ հավելվածով: Սպասարկումն իրականացվում է 24/7/365 ռեժիմով: Այժմ արդեն բանկը համագործակցում է VISA ու Master Card, SWIFT համակարգերի հետ, հաստատել է թղթակցային հարաբերություններ մի շարք

Բանկի ոչ տոկոսային եկամուտները 2023թ.-ին կազմել է 815 մլն ՀՀ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ նվազելով 48%-ով: Ոչ տոկոսային ծախսերը 2023թ.-ին կազմել է 6.7 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճելով 39%-ով:

Արդյունքում 2023թ.-ին Բանկն ունեցել է շուրջ 4.9 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ՝ 2022 թվականի նկատմամբ նվազելով 1 մլրդ ՀՀ դրամով:

Առանցքային ֆինանսական և նորմատիվային ցուցանիշներ

Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը 2023թ.-ի վերջի դրությամբ կազմել է 38.9%, իսկ ընդհանուր իրացվելիության ցուցանիշը՝ 20%:

Ակտիվների և կապիտալի շահութաբերությունը 2023թ.-ի վերջի դրությամբ կազմել է համապատասխանաբար ՝ 5.3% և 9.5%:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ՝ ԱՐՄԵՆ ՔԹՈՅԱՆ